ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ»-Ի ԷՋԵՐՈՒՄ (1920 Թ.)

Հայ-թուրքական պատերազմի գոյժը «Ճակատամարտ» օրաթերթը տպագրել է 1920 թուականի Հոկտեմբերի 8-ի համարի ճակատային հատուածում[1]։ «Յարձակումներ Հայաստանի դէմ.- Սարըգամըշի եւ Կաղզուանի մէջ թուրքերը ետ մղուած են»[2],- տեղեկացնում էր պարբերականը։ Լուրը վերցուած էր Հոկտեմբերի 5-ին Հայաստանից խմբագրութեանն ուղարկուած հեռագրից, որտեղ նշուած էր նաեւ հայոց զօրքի բարոյական բարձր կորովի եւ թուրքական կողմի ծանր կորուստների մասին[3]։ Թերթի ձեռք բերած մասնաւոր տեղեկութիւնների համաձայն՝ հայկական բանակն ամեհի թափով էր ետ մղում թշնամու գրոհները, իսկ կանոնաւոր բանակին օրեցօր միացող հայ կամաւորական խմբերը հրաշքներ էին գործում[4]։ «Եթէ Թուրքիոյ կողմէն անօթիներու եւ բորենիներու վոհմակ մըն է, որ կը յարձակի, Հայաստանի կողմէն անկախութեան եւ ազատութեան հուրքով բազմապատկուած կորիւններ են, որ կը խոյանան, գրոհ կու տան մինչեւ անգամ թնդանօթներու վրայ։ Այդպիսի ուժ մը անպարտելի կը մնայ, ինչպէս մնաց մինչեւ այսօր»[5],- կարդում ենք «Թուրք յարձակողականը» վերնագրով խմբագրականում։

«Ճակատամարտ»-ը չի սահմանափակուել միայն լուրեր կամ թղթակցութիւններ տպագրելով հայ-թուրքական կռուի վերաբերեալ։ «Հայ եւ թուրք պատերազմ» խորագրի ներքոյ ամէն օր, լրաքաղին զուգընթաց, ներկայացրել է նաեւ վերլուծական յօդուածներ, որոնցից շատերն ամփոփուած են «Մեր խօսքը» խմբագրականների շարքում։ Թերթը պնդում էր, որ այս պատերազմի հրձիգները միայն քէմալական շարժման կարկառուն դէմքերը չէին։ Նրանք «միշտ կը վայելեն Պոլսոյ ամենաբարձր շրջանակներուն լռին հաւանութիւնը, ոչ Քէմալներն են ինքնագլուխ, ոչ ալ Խալիլները կամ Էնվէրները»[6]։ Այս դիտարկումը զուգորդում էր փաստերով, որոնք վկայում էին Թուրքիայի կողմից Մուդրոսի զինադադարի եւ միջազգային մի շարք համաձայնագրերի միակողմանի խախտումը[7]։ Թերթը գրում էր, որ թուրքական այս պատերազմի սանձազերծման մէջ ուրոյն դերակատարում ունէին բոլշեւիկեան Ռուսաստանն ու Ատրպէյճանի «կարմիրները»[8]։ Լուրերից մէկի վերնագիրն այս առումով շատ խօսուն էր՝ «Երկու ճակատներու վրայ. հայկական յաղթանակ թուրքերու եւ ռուսներու դէմ»[9]։

---

[1] Պարբերականը 15-20 օր ուշացումով էր Հայաստանի Առաջին հանրապետութիւնից տեղեկատուութիւն ստանում։ Դա էր պատճառը, որ Հայ-թուրքական պատերազմի մասին լուրն ուշացումով էր տպագրել.- **Մ. Յ.**։

[2] Ճակատամարտ 1920, № 574։

[3] Նոյն տեղում։

[4] Նոյն տեղում։

[5] Նոյն տեղում։

[6] Նոյն տեղում։

[7] Նոյն տեղում։

[8] Նոյն տեղում։

[9] Ճակատամարտ 1920, № 569։

«Ճակատամարտ»-ի դիտարկումներն ու վերլուծութիւնները պատերազմական գործողութիւնների կապակցութեամբ

Ըստ պարբերականի վերլուծութիւնների՝ մի քանի ճակատով սկսուած համաժամանակեայ այս մարտական գործողութիւններով քէմալականներն ուզում էին 4 հիմնական խնդիր լուծել՝

- *գրաւել Կարսը, Արդահանը եւ Բաթումը,*
- *կապ հաստատել Ատրպէյճանի հետ,*
- *հայթայթել պարէն եւ ռազմամթերք*[10]
- *կանխել դէպի Արեւմտեան Հայաստան հայկական կողմի ենթադրեալ արշաւանքը*[11]*։*

Թերթը, վկայակոչելով լրատուութեան սեփական աղբիւրները, գրում էր, թէ Կարսը, Արդահանը եւ Բաթումը գրաւելու որոշումը Մուստաֆա Քէմալն ընդունել էր դեռեւս 1920 թուականի Յունիսի 6-ին[12]*։ «Անցեալ տարի ամրան՝ ձախողեցաւ Սարըգամըշ-Կարսի դէմ կատարուած փորձը... Քէմալական իշխանութիւնը երբեք չհրաժարեցաւ այդ վտանգաւոր ծրագրէն, շնորհիւ Մոսկուայի խրախոյսներուն, եւ հիմա նոր փորձ մըն է, որ կը կատարէ՝ առիթը յարմար նկատելով։ Թուրք աղբիւրները կը հաւաստեն, որ այս անգամ շատ լաւ պատրաստուած ուժեր կան, եւ թէ Հայաստան չպիտի կրնայ տոկալ։ Արդեօ՞ք»*[13]*,- գրում էր «Ճակատամարտ»-ը։*

Խմբագրակազմի կարծիքով՝ Հայաստանի Առաջին հանրապետութիւնն այս պատերազմում յաղթելու էր, թէեւ յաղթանակի հիմնական պատճառը համարում էր մեր բանակի հայրենասիրական ոգին, ինչը, սակայն, իրականում բաւարար չէր թուրքական յարձակումներին դիմադրելու համար։ «Ժողովուրդը վայրկեանին գիտակցութիւնն ունի եւ վճռած է մինչեւ վերջին մարդն ու փամփուշտը կռուիլ։ «Դէպի Կարի՛ն», «Դէպի Սեւ ծով», «Մահ կամ վերջնական յաղթանակ»՝ ահա կարգախօսները»[14]*,- տեղեկացնում էր «Ճակատամարտ»-ը։ Թերթը նշում էր, որ Հայաստանի կառավարութիւնը զօրակոչ էր յայտարարել մինչեւ 35 տարեկանների համար եւ կարգաւորել էր երկաթուղու երթեւեկը*[15]*։ Կամաւորները նոյնպէս միանում էին զօրքին*[16]*։ Մինչեւ Հոկտեմբերի 14-ը միայն Թիֆլիսում հաւաքագրուել էին աւելի քան 30.000, իսկ Բաթումում՝ 5000 հայ կամաւորներ*[17]*։*

Միեւնոյն ժամանակ թերթը փաստում էր, որ Քէմալը միայն Սեւ ծովի առափնեայ տարածքում զինուորագրել էր 7000 մուսուլմանի, որոնք միանալու էին Հայաստանի դէմ սկսուած ռազմական գործողութիւնները ղեկավարող Քեազիմ Կարա Պեքիրի բանակին[18]*։*

Հայ-թուրքական պատերազմում թուրքական զօրախմբերին, պարբերականի հրապարակումների համաձայն, աջակցում էին Խորհրդային Ռուսաստանի եւ Խորհրդային Ատրպէյճանի իշխանութիւնները. «Մուսթաֆա Քէմալ ինք յայտնապէս կը խոստովանի

---

[10] Ճակատամարտ 1920, № 574:

[11] Ճակատամարտ 1920, № 576:

[12] Ճակատամարտ 1920, № 573:

[13] Նոյն տեղում:

[14] Ճակատամարտ 1920, № 583:

[15] Ճակատամարտ 1920, № 576:

[16] Նոյն տեղում:

[17] Ճակատամարտ 1920, № 583:

[18] Ճակատամարտ 1920, № 580:

այդ պարագան, Չիչէրինին ուղղած նամակով մը, որ կը հաստատէ համիսլամական գորշ զանգուածին եւ ընկերային յեղափոխական կարմիր առաքեալներուն սերտ գործակցութիւնը։ Մոսկուան ... ամէն աջակցութիւն կ՚ընծայէ Թուրքիոյ «փրկիչ»-ներուն, հրահանգներ կու տայ, դրամ եւ ռազմանիւթ կ՚ուղարկէ»[19]։ Թերթն, իբրեւ ասուածի ապացոյց, տպագրել էր Քէմալ Աթաթուրքի վերոյիշեալ նամակը[20]։ Նախաբանում նշում էր, թէ այդ նամակը լոյս էր սփռում ռուս-թուրքական համագործակցութեան անյայտ հանգամանքների վրայ։ Մասնաւորապէս՝ ասում էր, որ սուտ էր թուրքերի եւ ռուսների կողմից տարածուող այն տեղեկութիւնը, ըստ որի՝ «Հայաստան Սովիէթական Ռուսիոյ միջնորդութիւնը մերժեր է վէճերը խաղաղօրէն լուծելու մասին»[21]։ Սուտ էր համարում նաեւ այն, թէ քէմալականներն ուզում էին գրաւել Կարսի, Բաթումի եւ Արդահանի շրջանները՝ տեղի մուսուլման ազգաբնակչութեանը հայերի կողմից «կոտորուելու» վտանգից փրկելու համար[22]։ Ֆրանսիական մամուլից թարգմանաբար արտատպուած մէկ այլ վաւերագիր փաստաթղթի միջոցով թերթը փաստում էր, որ Հայ-թուրքական պատերազմի բուն նպատակը «Պաքուի հետ յարաբերութեան ուղիղ գիծ մը ապահովելն» էր[23]։ Խմբագրականը եզրակացնում էր, որ այս պատերազմում Խորհրդային Ռուսաստանի եւ քէմալականների շահերը համընկնում էին՝ Հայաստանի Առաջին հանրապետութիւնը վերացնելու նպատակն իրականացնելու համար։ Վրաստանն էլ պահպանելու էր չեզոքութիւն եւ չէր օգնելու Հայաստանին։ Թերթը պնդում էր, որ թուրքերի հետ տարուած բանակցութիւնների հետեւանքով էր ընդունուել այդ որոշումը վրացական իշխանութիւնների կողմից[24]։ Պարբերականը գրում էր, որ Հայաստանը միայնակ յայտնուել էր բաւական բարդ պատերազմական իրավիճակում եւ սեփական ուժերով պէտք է դիմադարձ կանգներ ռուս-թուրքական յարձակմանը. «Հայ զինուորին համար ... հայրենիքը եւ անկախութիւնը սեփական ուժերով փրկելու այդ կա՛մքն է, որ ամէն բան կ՚արժէ»[25]։

«Ճակատամարտ»-ը տպագրել էր Հայաստանի Առաջին հանրապետութեան վարչապետի, պատերազմական նախարարի, անուանի զօրավարների եւ պետական այրերի կոչերն՝ ուղղուած հայ ժողովրդին[26]։ Դրանցով նրանք ոչ միայն ոգեւորում էին պատերազմական անհաւասար պայմաններում յայտնուած հայութեանը, այլեւ տեղեկութիւններ էին հաղորդում հայկական զօրքի մարտական յաջողութիւնների մասին։ Օրինակ՝ Երեւանի «Աշխատաւոր» թերթից արտատպած վարչապետ Համօ Օհանջանեանի խօսքից «Ճակատամարտ»-ի ընթերցողները տեղեկանում էին, որ ռազմաճակատի առաջնագիծ էին մեկնել բոլոր նախարարները, իսկ պատերազմական նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը վստահ յայտարարում էր. «Համոզուած ենք, որ պիտի կոտորենք մեր թշնամիները, որոնք պիտի հիասթափուին իրենց յոյսերուն մէջ։ Վճռած ենք յաղթել եւ պիտի յաղթենք»[27]։

Զօրավար Սեպուհն էլ Կարսից էր դիմում հայ ժողովրդին՝ համատեղ ուժերով դի-

---

[19] Ճակատամարտ 1920, № 584։

[20] Նոյն տեղում։

[21] Նոյն տեղում։

[22] Նոյն տեղում։

[23] Նոյն տեղում։

[24] Նոյն տեղում։

[25] Նոյն տեղում։

[26] Դրանցից շատերն արտատպութիւններ էին Հայաստանի Առաջին հանրապետութեան թերթերից կամ լրաբեր էին «Ճակատամարտ»-ի ստացած հեռագրերից.- **Մ. Յ.**։

[27] Ճակատամարտ 1920, № 583։

մադարձ կանգնել թշնամուն եւ գիտակցել պահի կարեւորութիւնը[28]։ «Հայաստանի բանալին՝ Կարսը, վտանգի տակ է։ Կոչ եմ անում, որ 18-40 տարեկանը աճապարէ զէնքով, մանգաղով, գերանդիով Կարսն ու Հայաստանը փրկելու։ Եթէ տուինք Կարսը, կուտանք Հայաստանը»[29],- նշուած էր այդ կոչում։

«Ճակատամարտ»-ում տպագրուած էր նաեւ համայն հայութեանն ուղղուած ամենայն հայոց Գէորգ 5-րդ կաթողիկոսի խօսքը[30]։ Հայրապետը ոգեւորում էր ժողովրդին անցեալի հայ քաջերի օրինակներով։ Նա մասնաւորապէս ասում էր. «Եթէ քեզ համար թանկ է հայրենիքը, եթէ դու սիրում ես ազատ ապրել, եթէ քեզ համար նուիրական եւ սուրբ է հայի անունը, պատիւը, հայրերիդ ու պապերիդ արիւնով ներկուած եկեղեցին, ընտանեկան սրբութիւնը եւ օճախը, ապա ժամանակն է, որ դու զէնքը ձեռքիդ պաշտպան հանդիսանաս վտանգուած հայրենիքիդ»[31]։

Պարբերականի էջերում այն օրերին Հայաստանում տիրող մթնոլորտի մասին պատկերացում էր տալիս անուանի դերասան Յ. Աբելեանը, որն իր դերասանական խմբով հիւրախաղերի էր ժամանել Կ. Պոլիս[32]։ Նա ասում էր, որ մեծ էր մեր ժողովրդի ոչ միայն հայրենիքը կեանքի գնով պաշտպանելու ցանկութիւնը, այլեւ վրէժի ծարաւը թուրքերի հանդէպ[33]։ «Այնքան շատ են արձանագրուող եւ ճակատ մեկնող կամաւորները, որ ստիպուած են ընտրութիւններ ընել։ Թիֆլիսի մէջ երիտասարդները բոլորն ալ միայն մէկ կարգախօս ունին՝ կամաւոր եւ դէպի՛ ճակատ։ Ամբողջ ուսանողները մեկնած են Հայաստան։ Միեւնոյն խանդավառութիւնը եւ զոհաբերութեան ոգին կը տիրէ Հայաստանի բոլոր գաւառներուն մէջ։ Դասալիքները կը քարկոծուին նոյն իսկ կիներուն կողմէ»[34],- վկայում էր տաղանդաւոր դերասանը։ Նա նաեւ նշում էր, որ քէմալական զօրքի անակնկալ յարձակումից ուշքի եկած հայկական ուժերը կարողացել էին կասեցնել թշնամու առաջխաղացումը։ Աբելեանը հայ զինուորներին համեմատում էր երկաթէ պատնէշի հետ, որը ետ էր մղում հակառակորդի յարձակումները[35]։

«Ճակատամարտ»-ը գրում էր, որ Հայաստանում եւ հայկական գաղթավայրերում մէկ նշանաբան էր միաւորում ողջ հայութեանը՝ «Ամէն ինչ ճակատի համար»[36]։ Համահայկական այդ նպատակին համար էին գործում Թիֆլիսում եւ Բաթումում հիմնուած Հայաստանի փրկութեան կոմիտեները, որոնց գործունէութիւնը հանգամանօրէն լուսաբանւում էր թերթի էջերում։ Օրինակ՝ տպագրուել էր Թիֆլիսի այդ կառոյցի կոչը[37]։ «Հայրենիքը վտանգի մէջ է... Կարգը եկած է քաղաքացիներուն, որոնցմէ ոչ մէկը չպիտի խուսափի իր նիւթական միջոցները հայրենիքի պաշտպանութեան գործին տրամադրելէ։ Վայրկեանը լուրջ է եւ հրամայողական։ Ամէնքը դէպի ճակատ։ Ով որ հայրենիքի հետ չէ, հայրենիքի դէմ է»[38],- մասնաւորապէս սա էր գրուած այդ կոչում։ Թիֆլիսի՝ Հայրենիքի փրկութեան կոմիտեն առաջարկում էր տեղաբնակ բոլոր հայերին կոնկրետ նշուած ժամկէտներում (մինչեւ Հոկտեմբերի 12-ը- **Մ. Յ.**) միանալ յանուն Հայաստանի փրկութեան սկսուած հանգանակութեանը, եթէ չէին ուզում համարուել հայ-

[28] Ճակատամարտ 1920, № 583:

[29] Նոյն տեղում:

[30] Ճակատամարտ 1920, № 584:

[31] Նոյն տեղում:

[32] Ճակատամարտ 1920, № 583:

[33] Նոյն տեղում:

[34] Նոյն տեղում:

[35] Նոյն տեղում:

[36] Ճակատամարտ 1920, № 584:

[37] Նոյն տեղում:

[38] Նոյն տեղում:

րենիքի դաւաճան[39]։

«Ճակատամարտ» օրաթերթի անդրադարձը Հայ-թուրքական պատերազմին

Թերթը «Հայ եւ թուրք պատերազմին ընթացքը» խորագրի ներքոյ ամենօրեայ կըտրուածքով անդրադառնում էր Հայ-թուրքական պատերազմի ընթացքին, կարեւոր դրուագներին եւ ճակատամարտերին, բանակցութիւններին։ Յատկապէս Կարսի համար մղուող մարտերն էին գտնւում «Ճակատամարտ»-ի ուշադրութեան կենտրոնում։ Խմբագրակազմը դրանք ներկայացնում էր՝ արտատպումներ կատարելով հայաստանեան եւ թիֆլիսահայ մամուլի օրգաններից, ինչպէս նաեւ այդ օրերին Հայաստանից Կ. Պոլիս ժամանող մտաւորականներից ու զինուորականներից։ Պարբերականը շարունակում էր պահպանել լաւատեսութիւնը հայկական ուժերի համախմբման եւ յաղթանակի հասնելու առումով, թէեւ այդ ամէնի համար չկային օբյեկտիւ նախադրեալներ։ Բերենք մէկ օրինակ Թիֆլիսի «Աշխատաւոր» թերթից արտատպուած յօդուածից[40]։ «Կարսն ընկնում է... Չկայ տրտունջ, այլ՝ վճռականութիւն, չկայ սարսափ, այլ՝ ոգեւորութիւն։ Պաշտպանել ազատութիւնը, ետ քշել թշնամուն.- ահա ամէնքի կամքը... Հայ զօրքերն անցան յառաջխաղացութեան եւ կռուի նախաձեռնութիւնը ձեռք առին»[41],- ահա այսպէս լաւատեսօրէն էր աւարտւում թղթակցութիւնը։ Նոյն շարդարացուած ու չհիմնաւորուած լաւատեսութիւնը կար թերթում տպագրուած Հայաստանի կառավարութեան զեկոյցում, որտեղ շարադրուած էին քէմալականների հետ Կարսի անկումից յետոյ կնքուած զինադադարի մանրամասները[42]։ «Այս բանակցութիւնները բարեյաջող ելք ունեցան»[43] նախադասութիւնն ամէն ինչ ասում է թէ՛ խմբագրակազմի, թէ՛ Հայաստանի կառավարութեան դիւանագիտական ունակութիւնների ու դիւանագիտական գիտելիքների մակարդակի մասին։

Թերթում չկայ Հայաստանի կառավարութեան վարած քաղաքականութեան մասին որեւէ բացասական գնահատական անգամ երկրի համար այդ ճակատագրական պահին, երբ Հայ-թուրքական պատերազմն աւարտուեց քէմալականների յաղթանակով։ Ի հարկէ, դա առաջին հերթին պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ թերթը քաջ գիտակցում էր տուեալ ժամանակաշրջանում հայկական պետականութեանը սպառնացող օբյեկտիւ եւ անբարենպաստ աշխարհա-քաղաքական պայմանները, ռուս-թուրքական փոխշահաւէտ համագործակցութեան վտանգները, Անտանտի պետութիւնների եւ Միացեալ Նահանգների երկդիմի ու ձեռքերը լուանալու քաղաքականութիւնը, միայնակ մնացած Հայաստանի Առաջին հանրապետութեան յուսահատ պայքարի ու գոյատեւման անպտուղ ջանքերը։ Թերթը նաեւ հասկանում էր, որ այդ իրավիճակում որեւէ դրական արդիւնք չէր տալու կառավարութեան կոչը. «Քաղաքացինե՛ր, փորձութեան այս սարսափելի ժամուն մոռցէք ձեր բոլոր անձնական գործերը, ամբողջ ընտանիքով նուիրուեցէք հայրենիքի պաշտպանութեան։ Կռիւը ժողովրդական պէտք է ըլլայ։ Իւրաքանչիւր հայ պէտք է ոտքի կանգնի Հայաստանի պաշտպանութեան համար։ Մա՛հ կամ ազատութիւն.-ահա այս է օրուան նշանաբանը»[44]։

1920 թուականի Հոկտեմբերի սկզբին թերթը կարծում էր, որ քէմալականները, նոյնիսկ Ռուսաստանի օգնութեամբ, չէին կարողանալու յաղթել Հայաստանին, որը շատ շուտով իրեն էր կցելու Թուրքիայի արեւելեան նահանգները՝ Արեւմտեան Հայաս-

---

[39] Ճակատամարտ 1920, № 584:

[40] Ճակատամարտ 1920, № 607:

[41] Նոյն տեղում:

[42] Նոյն տեղում:

[43] Նոյն տեղում:

[44] Նոյն տեղում:

տանը[45]։ «Այլեւս չկայ ուժ մը, որ կարենայ իրենց իշխանութիւնը վերահաստատել այնտեղ։ Ուշ կամ կանուխ պիտի կատարուի ինչ որ անդառնալի է, ինչ որ վճռուած ու ստորագրուած է... Մոսկուայի վրայ դրուած յոյսերը խախուտ են[46] ...Կ'ըսեն, թէ յաշտութեան հիմը պիտի ըլլայ Սէվրի դաշնագրին ճանաչումը։ Ուրեմն քէմալականները անձնատուր պիտի ըլլան ...Թուրքիոյ փրկութիւնը Արաքսի ափերէն չէ, որ պիտի գայ...»[47],- գրում էր պարբերականը։ Իրադարձութիւնները, սակայն ի վնաս հայկական պետութեան լուծեցին Հայ-Թուրքական պատերազմի ելքը։

Ամփոփելով՝ կարող ենք փաստել հետեւեալը.

- *«Ճակատամարտ»-ի էջերում ոչ միայն ամփոփուած է Հայ-Թուրքական պատերազմի ողջ ընթացքը, այլեւ յատկապէս կարեւոր փաստաթղթերի տպագրութեան միջոցով ներկայացուած են դրա ծագման ու Հայաստանի կրած պարտութեան պատճառները եւ ծանր հետեւանքները, ի թիւս որոնց՝ հողատարածքների կորուստն ու երկրի անկախութեան վերացումը։*
- *Թերթի հրապարակումներն աչքի են ընկնում իրենց հրատապութեամբ, օբյեկտիվ վերլուծութեամբ եւ անաչառութեամբ։*
- *Զպէտք է մոռանալ այն հանգամանքը, որ պարբերականը լոյս էր տեսնում Թուրքիայի մայրաքաղաքում, բայց չէր վախենում իր յօդուածներում ներկայացնել ճշմարտութիւնը այդ պատերազմը սանձազերծող կողմի նկրտումների եւ հայ ժողովրդի հայրենիքի բռնագրաւման, տեղաբնակ հայութեան ցեղասպանութեան հաշուին թուրքական պետութիւն հիմնելու մասին։*

<u>Գրականութիւն</u>

Ճակատամարտ 1920, Կ. Պոլիս, № 569 (Երկու ճակատներու վրայ. հայկական յաղթանակ թուրքերու եւ ռուսներու դէմ), (Ի՞նչ է իմաստը այս խաղերուն), № 572 (Շոյելով պիտի նուաճեն), № 573 (Յունիս 6-ի հրամանը), № 574 (Քէմալական գործողութիւնները Հայաստանի դէմ), (Թուրք յարձակողականը), № 576 (Կռիւները կը շարունակուին), № 580 (Մուստաֆա Քէմալ կը զինուորագրէ բոլորը), № 583 (Մահ կամ վերջնական յաղթանակ), (Կամաւորական շարժումը խոշոր համեմատութիւններ կառնէ), (ՀՀ վարչապետին եւ պատեր. նախարարին յայտարարութիւնները), (Զօր. Սեպուհի կոչը), (Թուրք հորդաներուն դիմաց երկաթէ պատնէշ մը), № 584 (Ամէն ինչ ճակատի համար), (Մուստաֆա Քէմալի նամակը Զիչերինին), (Ինչպէս որոշուեցաւ յարձակողականը Հայաստանի դէմ), (Կաթողիկոսին կոչը), (Հայաստանի փրկութեան կոմիտէին կոչը), № 607 (Ինչպէ՞ս ինկաւ Կարսը), (Զեկոյց հայկական կառավարութեան. զինադադարը ինչպէս կնքուեցաւ), (Հայկ. կառավարութեան կոչը ժողովուրդին. մահ կամ ազատութիւն)։

ՄԱՐԻԱՄ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Բանասիրական գիտութիւնների թեկնածու, ԳԱԱ պատմութեան ինստիտուտի առաջատար գիտաշխատող

[45] Ճակատամարտ 1920, № 569։

[46] Նոյն տեղում։

[47] Ճակատամարտ 1920, № 572։